ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Սովը Ռուսաստանում։—Գիւղական խնդիրները։—Ազնվականների պետական բանկը Անդրկովկասում։—Հացի առևտուրը և արտահանման արգելքը։—Հայկական Թատրոն։

Սովը Ռուսաստանում չարունակում է մարդերը զբաղեցնել. Համաձայն պաշտօնական հաղորդագրութեան՝ վատ հունձից ամենից շատ վնասուել են Վոլգա գետի ստորին և միջին ընթացքի նահանգները, կենտրոնական-երկրագործական նահանգները և մասամբ Ուրալ գետին կից նահանգները։ Այդ բոլոր նահանգներում եղած հունձից դուրս հարկաւոր է դեռ մօտ 100 միլիոն պուդ հաց։ Սահմանութեան մնացած նահանգներում հունձը բաւարար էր կամ աւելի քան բաւարար։ Վնասուած նահանգների թիւը, որ անցեալ անգամ 18 էի դուց տուել, այժմ, որպէս լալտեւում է՝ 22 է։ Բայց ռուսաց մի քանի լուրջ թերթերի մէջ կարդում ենք որ հացի պակասը հասնում է մինչ 250 միլիոն պուդի։ Ու այժմ ի հարկէ ճիշտ ցոյց տալ անհնարին է։

Հացի չտեմարանների խնդիրը, գիւղական վարկի հաստատութիւնների խնդիրը, վաշխառուների գէմն առնելու միջոցները—այս բոլորը նոր նորից առաջ են գալիս և զբաղեցնում մամուլը. կառավարութիւնը։ Պետերբուրգի Вольно-экономическое Общество *(ազատ-տնտեսագիտական ընկերութիւնը) դրաւեց խնդրով. առանց մի որ և է ինքնուրոյն և նոր միջոց առաջարկելու խնդիրը լուծելու համար։*

Իւր հոկտեմբերի համարում ռուսաց ամսագիր „Русская Мысль“ *տպեց պ. Միրսպոլսկու նամակը խմբագրութեան՝ ժողովուրդը հացով ապահովելու մասին։ Թէ այդ որքան մեծ խնդիր է Ռուսաստանի համար, այդ կ'երեայ հենց այն առաջարկից, որ անում է պ. Միրսպոլսկին։ Վերջինս առաջարկում է գիւղացիների դրամով վճարուող հարկը փոխարինել հացով վճարելի հարկով։ Ա. ահա թէ, նորա կարծիքով, ինչպէս այդ պէտք է կատարուի. հացը (ցորենով, հաճարով և այլն) կը հաւաքի տեղական ինքնավա-*

րութիւնը (զեմստուօ), և այն էլ ոչ ամբողջապէս, որովհետև հացի մի մասը կարելի կը լինի պարտքով աւել գիւղացիներին ցանքսերի համար վատ հունձերի տարիներում։ Դորանով պ. Միրոպոլսկին կարծում է թէ առաջին, կ'ազատի գիւղացիներին վաչխառուներից, մասնաւոր փոխառութիւններից, և երկրորդ, հասարակաց չտեմարանները սով տարիները լիքը կը լինեն։ Միևնոյն ժամանակ իբր թէ գիւղացիների համար հարկ չի լինիլ ժամանակ և փող կորցնել բաղարները գնալ՝ հացը ծախելու համար։

Ես այստեղ առաջ բերեցի պ. Միրոպոլսկու առաջարկը ոչ սորա մանրամասն քննադատութեան մէջը մտնելու համար, որովհետև դորանից մեր երկիրը դրականապէս ոչ մի օգուտ քաղել չի կարող։ Եւ ինչու. որովհետև պ. Միրոպոլսկու սիստեմը, որ ես առանց այն էլ միանգամայն անգործնական եմ համարում, հիմնուած է կառավարութեան և ինքնավարութեան (զեմստուօյի) փոխադարձ աջակցութեան վերայ. բայց մինչդեռ Ռուսաստանում կայ նահանգական ինքնավարութիւն, զեմստուօ կոչուած, մեզանում, Կովկասում նահանգական և գաւառական ինքնավարութիւն ամենևին չը կայ, որի մասին գանգատելով խօսել ենք «Մուրճ»-ի այս տարուայ առաջին համարի առաջնորդողում։

Բայց և այնպէս խնդիրը ինքն ըստ ինքեան կարևորութիւն ունի նաև մեզանում, որովհետև սով մեզանում պատահեց 1879 թուականին. և վերջապէս հասարակաց կարծիքը արթնանում է միայն այն ժամանակ, երբ հունձի փչանալը ընդհանուր է մի երկրում. միայն այդ ժամանակ մենք խօսում ենք սովի և թանկութեան մասին. բայց որքան և որքան անգամ հունձերը փչանում են երկրի այս կամ այն տեղում,—դորա մասին հարցնող չը կայ։ Այս վերջին դէպքում, ճիշդ է, ոչ սով է լինում և ոչ թանկութիւն, բայց հարիւրաւոր և հազարաւոր ընտանիքներ մնում են առանց ցանքսի և ուտելու պաչարի։ Այդ դէպքում կարօտեալները ստիպուած են լինում դիմել գիւղական հարուստներին, փող ունեցողներին. իսկ սոցանից շատերն էլ հէնց այդպիսի դէպքերի են սպասում, որ իրանց դիմեն պարտքով փող ուղևլու և տալիս են փող գիւղացու համար ծանր պայմաններով ու մեծ տոկոսներով։

Սովի, թանկութեան և առհասարակ հունձերի թէ ընդհանուր և թէ մասնաւոր կորուստների հետևանքների դէմն առնելու համար նոր չէ որ առաջարկում են հացի հասարակաց չտեմարաններ, գիւղական բանկեր, գիւղական արդիւնաբերութեան հասարակաց պահեստներ։ Դորա միևնոյն ժամանակ ընդհանուր միջոցներ են գիւղական արդիւնաբեր դասակարգի դրութիւնը բարելաւելու համար. դորա միջոցներ են, որոնցով գիւղացին կարող է աւելի օգուտ քաղել իւր արդիւնաբերութիւնից, քան եթէ նա զուրկ մնայ իրան օգնող այդ հաստատութիւններից։ Նորա դրական հարստու-

թիւն չեն աւելացնում, զորտնով հում արդիւնք չի աւելանում, բայց աւելանում է գիւղացու զուտ արդիւնքը։ Եթէ առաջ գիւղացին իւր դիցուք 300 պուդ ցորենից ստանում էր օգուտ միայն 50 բուբլի, չնորհիւ նրան օգնող այն հաստատութիւնների՝ նա կարող է ստանալ 60—70—80—100 բուբլի զուտ օգուտ։

Արդ, մեր երկրում, Անդրկովկասում այդ հաստատութիւններից ոչ մէկը չը կայ. հացի հասարակաց շտեմարաններ գոնէ մեծ չափսերով չը կան բոլորովին. գիւղական բանկ գոյութիւն չունի ոչ մի տեղ մեր երկրում. գիւղական արդիւնաբերութեան հասարակաց պահեստներ, այսինքն այն ինչ ռուսաց օրէնսդրութեան մէջ լայտնի է товарные склады անունով— նոյնպէս բնաւ գոյութիւն չունին մեր երկրում.

Եւ բաւական չէ որ նոքա գոյութիւն չունին, մեր երկրի աղգաբնակութեանը լայտնի էլ չէ օրէնսդրութիւնը նոցա մասին. ժողովուրդը այդ կողմից կատարեալ խաւարի մէջ է։

Կայ կանոնադրութիւն գիւղական-պետական բանկերի 1885 թւականից, կայ և կանոնադրութիւն ապրանքների պահեստների, նոյնպէս պետական կադմակերպութեամբ, բարձրագոյն հաստատուած 30 մարտի 1888 թւականին։

Այդ գործերում գործնական յառաջդիմութիւն անել անհնարին է առանց դործող օրէնսդրութիւնը ճանաչելու։ Եւ անչուշտ հասարակութեանը ծանօթացնել նորա հետ մամուլի պարտքն է։ Մեր զաւառական ինտելիգենցիան այդ խնդիրները իւր սեպհականը պէտք է համարի, որովհետև առանց դորան՝ մամուլը չի կարող կապւել ժողովրդական ամբոխների հետ։ Բայց ժողովրդական կարևոր շահեր են կապւած այն հաստատութիւնների հետ որ ես վերը լիշատակեցի։ Գիւղական բանկեր, դիւղական արդիւնաբերութեան պահեստներ—դոքա մի մի կարևոր և անհրաժեշտ հաստատութիւններ են, որանցով ժողովրդական շատ խոշոր չարիքների դէմն է առնւում։ Այս անդամ ես բաւականանում եմ միայն չոչափելով այդ խնդիրները. նոցա ուսումնասիրութիւնը ենթադրում է կատարեալ ծանօթութիւն գոյութիւն ունեցող օրէնսդրութեան հետ, որ աւելի լարմար է կատարել ամսագրի այս բաժնից դուրս։ «Մուրճ»-ը ուրեմն կը վերադառնայ այդ խնդիրներին։

Մինչև որ մեր երկրում կը բացւեն գիւղական բանկեր որոնց մասին քրոնիկի առաջին լօդւածում լիշւեց, հողագործ դիւղացի դասակարգի համար, կառավարութիւնը շտապում է ժամն վարկը առաջարկել դեռ ևս միայն աղնւական դասակարգին։ Անդրկովկասում մինչ այժմ գոյութիւն ունէին մէկը Թիֆլիսի նահանգի և միւսը Քութայիսի նահանգի աղնւականների հողային բանկերը (ոչ պետական), իսկ անցեալ

1890 թուականից բացուած է Թիֆլիսում ազնուականների պետական բանկի ճիւղը։ Այդ, ներկայ նոյեմբերին ֆինանսական մինիստրի կարգադրութեան համեմատ՝ ազնուականների պետական բանկի Թիֆլիսի ճիւղը իրաւունք է ձեռք բերում իւր գործողութիւնները տարածել նաև Երևանեան նահանգի վերայ։ Ովքեր պէտք է կարողանան զորանից օգտուել—միմիայն տոհմական ազնուականները, բէգերը, աղալարները, մելիքները, և ոչ հողագործ դասակարգը առհասարակ։ Բայց նոյն իսկ հողատէր դասակարգը զորանից օգտուել չը պիտի կարողանայ ամբողջապէս, որովհետև թէև իրապէս մի այդպիսի հողատէր դասակարգ կայ Երևանեան նահանգում, բայց այդ դասակարգի տոհմական ազնուականութիւնը մինչ այժմ հաստատուած չէ ռուսաց կառավարութիւնից։ Երկուսից մէկը՝ կամ ազնուական պետական բանկի բացումը պէտք է փութացնէ Երևանեան նահանգի, որպէս և միւս թրքա-հայ նահանգների մեծ կալուածատէրերի տոհմական ազնուականութեան մէջ հաստատելը, և կամ ֆինանսական մինիստրի նոր կարգադրութիւնը պիտի մնայ գրեթէ առանց օգուտի Երևանեան նահանգի կալուածատէր դասակարգի համար։

Ենթադրենք անգամ որ այդ խնդիրը լուծուեց օգուտ նոցա ազնուականութեան, բայց մեր երկրի կալուածատէր դասակարգը մինչ այժմ չի ապացուցել թէ մի մեծ ֆակտոր լինի մեր երկրի յառաջդիմութեան. դեռ աւելի պակաս քան Վրաստանում, մեր թրքահայ նահանգների կալուածատէրները։ այդ խաները, բէգերը, աղալարները որոնք բազմաթիւ են, զուրկ են պատմական ամուր և յառաջադէմ աւանդութիւններից և մեզանում ոչինչ չի գլուխ եկել նոցա միջոցով։ Եւ թէև հողատէրներ են նոքա, բայց ոչ հողագործ հողատէրեր. նոքա իրանց հողերից միայն մի տեսակ հարկ ստացողներ են, տասանորդով կամ այլապէս։ Այդ, ինչ օգուտներ պիտի կարողանայ տալ ազնուական պետական բանկը այդ դասակարգին—ես իսկապէս չը գիտեմ։ Պէտք է ենթադրել որ նա կ՚օգուտի փող ճարելու հեշտութիւնից աւելի շռայլութիւնների համար, քան թէ որ և է բարենորոգումներ մտցնելու իրանց կալուածներում։ Պարտքերի մէջ ընկնել ու խրուել, և ապա տէրութիւնից ոգորմութիւն խնդրել՝ հաւանականօրէն այդ կը՞լինի բոլոր հետևանքը։

Ռուսաստանի մի մեծ մասին հասած աղէտը թելադրեց կառավարութեանը՝ արգելել հացահատիկների արտահանումը կայսերութեան սահմաններից։ Առաջ այդ կարգադրութիւնը արուեց միայն հաճարի համար, որը Ռուսաստանում գործածուող ամենասովորական հացն է։ Մի երկու ամիս յետոյ, անցեալ հոկտեմբերին, արտահանման արգելքը տարածուեց նաև ուրիշ տեսակի հացահատիկների և նոցանից ստացուող ալիւրի վերայ,

բացի ցորենից. մի քանի ժամանակ յետոյ նաև ցորենի արտահանումը արգելուեց։

Այդ կարգադրութիւնները սակայն միայն եւրոպական Ռուսաստանին չեն վերաբերում. նոքա մեծապէս վերաբերում են նաև Անդրկովկասին, որտեղից, մեր երկրի համեստ չափերի համեմատ՝ բաւականի մեծ քանակութեամբ հացահատիկ է արտահանուում։ Ի բաց առած նաւթը՝ մեր երկիրը ոչինչ չի արտադրում անագին քանակութեամբ, այնքան այնպիսի քանակութեամբ, որ համաշխարհային նշանակութիւն ունենայ։ Մեր երկրի արդիւնաբերութիւններից միայն նաւթն է և նորանից ստացուող կերոսինը որ համաշխարհային նշանակութիւն ունին. մնացած բոլոր արդիւնաբերութիւնները գլխաւորապէս տեղական նշանակութիւն ունին, նոյն իսկ նոքա, որոնք արտահանուում են։ Բամբակը, որ այնքան մեծ հարստութիւն ենք համարում մեր՝ երկրի մանաւանդ Սրևանի նահանգի համար, և որը ամենամեծ մասով արտահանուում է Ռուսաստան—չնչին բան է համեմատած Ամերիկայում մշակուող և Ամերիկայից արտահանուող բամբակի քանակութեան հետ։ Բոլորովին նոյնը կարելի է ասել նոյն իսկ գինու մասին և այլն։ Թող ընթերցողը նորից աչքի անցնէ իմ անցեալ քրոնիկում առաջ բերած թուերը, որոնք ցոյց են տալիս թէ ինչ ապրանքներ ինչ քանակութեամբ տեղափոխել է Անդրկովկասեան երկաթուղին անցեալ 1890 թուականին, և կը համոզուի ինձ հետ, որ մի երկրի համար մի արդիւնքի արտահանութեան նշանակութիւնը նրանով չի չափուում թէ նա ինչ տեղ է բռնում համաշխարհային առևտրի, համաշխարհային շուկայի մէջ։ Եւ որ գլխաւորն է՝ արտահանութեան ազատութեան նշանակութիւնը միայն նրանով չի չափուում, թէ որքան է արտահանուում, այլ նաև նրանով, թէ այդ թէև փոքր արտահանութիւնը ինչպէս է ազդում տեղական գների վերայ։ Օրինակ՝ մեր հողագործը կարողանում է իւր բամբակը 4—5—6 ռուբլիով ծախել նոյն իսկ մեր տեղացի գործարանատէրին, երբ ազատութիւն կայ արտահանելու Կովկասից և ծախելու հեռաւոր վաճառանոցներում 8—9—10 ռուբլիով. բայց երբ այդ ազատութիւնը չը կայ՝ նա ստիպած կը լինի նոյն բամբակի պուդը ծախել մեր երկրացուն 1—2—3 ռուբլիով կամ աւելի պակասով, եթէ միայն ապրանքի քանակութեան համեմատ գնողներ չը կան։ Գիւղացին վերջապէս ստիպած կը լինի թողնել բամբակի մշակութիւնը մեծ չափերով, երբ կը տեսնի որ օգուտ չի ստանում։

Նոյն, և բոլորովին նոյն դիտողութիւնները կարելի է անել հացահատիկի մշակութեան և առուտուրի մասին. Մինչև 1884 թուականի վերջերը մեր երկրի դիցուք ցորենի գները այնքան ստոր էին, որ գիւղացին մեծ շահ չէր կարող ունենալ ցորենից. ինչ օգուտ կարող էր մնալ գիւղացուն, երբ սա ստիպած էր, երկրի հին գների համաձայն՝ իւր ցորենի պուդը ծախել 20—30 կոպէկով։ Եւ երևակայեցէք որ Անդրկովկասի մի

խոշոր մասը հէնց միայն հացահատիկ՝ ցորեն, գարի, եղիպտացորեն է արտադրում։

Պայմանները փոխուեցին, երբ Անդրկովկասեան երկաթուղին բացուեց և միջոց տուեց համեմատապէս լաւ դնով տեղական հացահատիկը ոչ միայն մեր երկրում ծախել, այլ և օտար երկիրներում ծախել, ուր գները մեր նախկին գներից շատ աւելի բարձր են։ 1884 թուականի վերջերքում սկսուեց Կովկասեան հացահատիկների արտահանումը Փոթիի և Բաթումի նաւահանգիստների միջով։ Գները իսկոյն բարձրացան. այն, որ առաջ 20—30—40—50 կոպէկով էր ծախուում, ստացաւ 60—80—90—100 կոպէկի գին նոյն իսկ մեր երկրում, որովհետև նոյն այդ հացահատիկը կարողանում էին արտասահմանում ծախել 1 ր., 1 ր. 10, 1 ր. 20, 1 ր. 30 կոպէկով կամ աւելի։ Այդպիսով մի յեղափոխութիւն կատարուեց հացահատիկների գների մէջ, և կատարուեց այդ միանգամից, և ոչ թէ տասնեակ տարիների ընթացքում։

Բնական է, որ այդ յեղափոխութեան սկզբի տարիներում, երբ մեր երկրում անցեալ տարիներից կար հացահատիկ հաւաքուած, նաև հացահատիկների արտահանութիւնը շատ միլիոնների էր հասնում, և բնական է որ երբ անցեալ տարիներից մնացած պաշարը սպառուէր—մեր երկրից հացահատիկ արտահանել կարելի էր միայն այդ դէպքում, երբ բարձրացած գները ազդէին մեր հողագործութեան վերայ և գիւղացիք, խրախուսուած լինելով, սկսէին իրանց հողագործութիւնը աւելի ընդարձակել, որտեղ այդ միայն կարելի էր։

Իւր ժամանակին, 1886 թուականին, մեր աչքի առաջը կատարուող իրերի այդ նշանաւոր փոփոխութիւնը ընդհանուր ուշադրութիւն դրաւեց, և նորան ուսումնասիրողը պնդում էր, որ, ի մեծ օգուտ մեր հողագործ դասակարգի, մեր երկրի հացահատիկների գները չեն ընկնելու մինչ նախկին գների աստիճանը, եթէ նոյն իսկ արտահանութիւնը նւազի կամ դադարի անգամ յաջորդ տարիներում. այդպիսով մեր գիւղացիք այսուհետև աւելի մեծ շահ են ունենալու հողագործութիւնից, որի արդիւնքը մեր քաղաքների և այլ բնակիչներին առաջ չնչին՝ օգուտով կամ ինասով էր ծախուում։ Երկրորդ, նա անկարելի էր համարում, որ բարձրացած գները չաղդեն մեր երկրի հողագործութեան ծաւալի վերայ, այնպէս որ, նորա ասելով, շատ հողեր որ մինչ 1884 թուականը չէին մշակուում, այժմ կամաց-կամաց կ'սկսեն մշակուել, այնպէս որ հաւանականօրէն, եթէ մինչ այժմ, ստոր գների ժամանակ, մեզ համար բաւարար չափով հացահատիկ էր մշակուում, այսուհետև խոմ Անդրկովկասը կ'աշխատի մեզ համար բաւական քանակութիւնից աւելի հացահատիկ արտադրել, ուրեմն աշխատել ոչ միայն երկրի բնակիչների կարիքների չափ, այլ դորանից աւելի՝ արտահանութեան համար։

Այդ հանգամանքների դէմ խօսողներ եղան Գիւղատնտեսական ըն-

կերութեան նիստերում. բայց և մամուլը լուռ չը մնաց, գլխաւորապէս սակայն այն ժամանակուայ „Тифлисскій Листокъ"-ը, որը յօդուած յօդուածի յետեւից տպեց այդ բոլորի դէմ. հայկական մամուլում հակառաւոր հանդիսացաւ «Մշակ» լրագիրը, և պ. Դր. Արծրունին տարիներ շարունակ և մինչ այժմ էլ ամենախիստ կերպով աշխատել է հերքել այն հալեացքները. էլ ես չեմ խօսում նորա պնդածների վերաբ, որոնք որ և է վերլուծութեան չեն յարմարւում, այնքան նոքա հակասական են և այնքան նոցա մէջ տեղ են բռնում անձնական վիրաւորանքները.

Ես չէի վերադառնալ այդ խնդրին, եթէ միայն խնդիրը ծանրակշիռ չը լինէր և նորա հետ ժողովրդական մեծ շահեր չը լինեն կապուած. Տարիներով կուռել մի հոսանքի դէմ, որը խոստանում է մեր երկրի հողագործների գրութիւնը բարելաւել, միջոց տալով գիւղացուն իւր հողագործութիւնից աւելի օգուտ, աւելի շահուել քան այդ առաջ կարելի էր—դա ՀՆԱՍԱԿԱՐ է, վտանգաւոր է, թէև ամենքը դորա ՀՆԱՍԱԿԱՐՈՒԹԻՒՆը այժմ չեն ղղում, խնդիրը ալապէս ասած ակադէմիական համարելով. Մենք դանդաղում ենք, որ շատ գիւղացիներ թողնում են իրանց ծննդավայրը, պանդխտում են և մինչև անգամ գաղթում. իսկ միւս կողմից բողոքում ենք և կռուում այն պայմանների և հանգամանքների դէմ, որոնք մի կտոր հաց կարող են տալ նոյն այդ գիւղացուն, այն հացը, որով միայն գիւղացին կը յօժարի իւր գիւղում մնալ ու գործել. Մենք ուզում ենք արհեստներ տարածել գիւղերում, բայց ազնւագոյնը բոլոր արհեստներից՝ երկրագործութիւնը հէնց դորանով հալածում ենք. Այո, հալածել է նշանակում, երբ մենք չենք ուզում ուրախակից լինել գիւղացուն, որը տեսնում է իւր աշխատութիւնը առաջներից աւելի լաւ վարձատրուած, և երբ նա տեսնում է որ իւր ջալէլ որդկերանցից մէկը, որ նախկին հանգամանքներում ստիպուած կը լինէր քաղաք գնալ փող աշխատելու համար, այժմ թերես աւելորդ ոյժ չէ, քանի որ, բարձրացած գների չնորհիւ, նա օգուտ ունի իւր գործը աւելի ընդարձակելու, որտեղ միայն այդ հնարաւորութիւնը կայ. Ա՛ւ գլխաւորն էլ հէնց այն է, որ այդ հնարաւորութիւնը կայ մեր երկրում, և անկասկած է որ 1884 թուականի վերջում տուած շարժումը ազդել է արդէն. Թէ չէ ինչով պէտք է մեկնել այս իրողութիւնը որ ոչ միայն 1885, 1886-ին, այլ և յաջորդ տարիներում հացահատիկների, գլխաւորապէս գարու և եգիպտացորենի արտահանութիւնը շարունակուեց, փոքր չէ թէ ոչ այն մեծ չափերով, ինչպէս 1886 թուականին. Եթէ այն շարժումը և գների յեղափոխութիւնը ազդած չը լինէր՝ կարող էր արդեօք պատահել որ այժմ Անդրկովկասից արտահանուի տարեկան մի քանի միլիոն պուդ հացահատիկ, գլխաւորապէս եգիպտացորեն և գարի. և չէ որ հէնց մեր երկրում ծախուող հացահատիկն էլ, այն որ հողագործները ծախում են մեր քաղաքի բնակիչներին—նոյն յեղափոխութեան չնորհիւ, այն գնով չի ծախուում, ինչ մինչ 1885 թուականն էր, այլ աւելի թանկ. չէ որ

ախար հէնց այդ հանգամանքից մեծապէս օգտւում են հացահատիկ մշակող գիւղացիները։

Ինձ մի քանի բաներ են առարկում։ այսպէս, օրինակ, «Մշակ»-ը պնդում է, թէ մեր երկրից հացահատիկ չը պէտք է արտահանել և որ չը պէտք է ուրախանալ, երբ մեր երկրում հացահատիկների գինը բարձրանում է։ իբր այդ բարձր գներից օգտւողները միայն ցորենի վաճառականներն ու վաշխառուներն են, և որ իբր դորանից գիւղացին ոչ մի օգուտ չունի։ Դէհ ուրիմն վաճառականների ձեռքից դիւղացուն ազատ պահելու համար՝ քարոզենք որ գիւղացին ոչինչ չարդիւնաբերէ, բացի այն, ինչ իւր ուտելու համար՝ բաւական է! Այ թէ ինչ բանի համար է ասւած՝ волковъ бояться—въ лѣсъ не ходить։ *Կը տեսնեմ որ վաճառականները աւելի են օգտւում, քան հարկաւոր է՝ ես միջոցներ կ'առաջարկեմ, որոնցով գիւղացին հնարաւորութիւն կը ստանայ քաղաքների և կամ հումաշխարհային շուկայի գներից աւելի լաւ օգտւել։ ես կ'առաջարկեմ հաստատել մեր երկրում ապրանքների պահեստներ։ համաձայն 1888 թւականի տւած Կանոնադրութեան, կամ դեռ ուրիշ միջոցներ, և ոչ թէ կը սկսեմ պահանջել որ հողագործութեան արդիւնքների գները վայր ընկնեն, իբր վաճառականների, կապալառուների, վաշխառուների ջիգրու! Ես կը կռւեմ վերջիններիս դէմ ոչ թէ տուժել տալով գիւղացուն, այլ աւելորդ միջնորդներին աւելորդ դարձնելով այս կամ այն միջոցով։*

Բայց ի հարկէ, ի դուր է կարծել թէ իրօք՝ այժմ բարձրացած գնից միայն վաճառականն է օգտւում։ Եթէ առաջ մի արդիւնքի պուդը արժէր 35 կոպէկ, շատ կարելի է որ վաճառականը աշխատէր գիւղացուց առնել 20—25 կոպէկով, որպէս զի քաղաքում ծախելով՝ 10—15 կոպէկ իրան մնար։ երբ այժմ նոյն արդիւնքի պուդը արժէ 80 կոպէկ, շատ հաւանական է որ նոյն վաճառականը, 10—15 և թէկուզ 20 կոպէկ աշխատելու համար՝ աշխատէ գիւղացուց պուդը առնել 60—65—70 կոպէկով։ Ուրեմն այն դէպքում գիւղացու ձեռքը կ'ընկնէր 20—25 կոպէկ, այս դէպքում՝ 60—65—70 կոպէկ։ Թէ չէ պէտք է ենթադրել որ գիւղացիները կատարելապէս անբան արարածներ են և կամ ոտով դլխով կաշկանդւած են՝ այդքերը բաց անել չը կարողանալու չափ։

Մեր հողագործների դրութիւնը առաջ անիծողութեան դրութիւն էր։ Քարոզել թէ լաւ է վերադառնալ այն դրութեանը—կը նշանակի ցանկանալ Տաճկահայաստանի շատ տեղերի դրութիւնը։ Ահա թէ մի արտասահմանեան հայ թերթի թղթակից ինչպէս է սկսում իւր նկարագրութիւնը Սեբաստիայի նահանգի։

«Գիւղացուն ստացւածներ մշակութեան արտադրութիւնք, կենդանիներ ու հողեր ըլլալով՝ քիչ անգամ պատրաստ հնչիւն դրամ կ'ունենայ։ Թէև կալի մէջ իւր արտադրութեան մեծ մասը կը սպառի կամ կը փճանայ, սակայն և այնպէս քիչ շատ համբարած ցորենով ալ կա-

բելի է իւր վիճակ բարելաւէր, եթէ տեղային հանգամանքներն, ճանապարհի և հաղորդակցութեան միջոցներն արտածման (արտահանութեան) նպաստէին. և այս խանգարուած ու դժուարութեանց մատնուած ըլլալով, ի քաղաք ցորեն խիստ ստորին գնով կը վաճառուին, և վաչխառու վաճառականաց ձեռքն անցնելով, նոքա կ'ընեն պէտք եղած վաստակը, և երկրագործն կը զրկուի, կամ ոչնչով վարձատրելով՝ ձեռնունայն կը գտնուի, և լաճախ մեծաքանակ հարկերու վճարման առջև անկարող կը մնայ։

Բայց ճիշդ հէնց այդ դրութիւնն էր մեղանում մինչ 1885 թուականը, դէպի ուր մեր քարոզում են վերադառնալ։ Եւ դեռ այժմ էլ շատ տեղեր, օր. Զանգեզուր և այլ տեղերում այդ դրութիւնն է իշխում։

Առարկում են նաև թէ հացի արտահանումից, ուրեմն և արտահանման ազատութիւնից կարող է սով պատահել երկրում։ Անհիմն երկիւղներ։ Մենք սով ունէինք մեր երկրում 1879 թուականին, երբ հաց չէր արտահանում. և մենք կարող ենք նման դժբաղդութիւնների հանդիպել ապագայում։ Անմիտ բան է պահանջել որ հողագործները 15—20—25 տարի ոչինչ չաշխատեն, թէ ինչ է մի տարի կարող են հունձերը շատ վատ լինել։ Նախ որ եթէ նոքա ոչինչ չաշխատեն—հողագործութիւնն էլ կը պակսի. և ուրեմն վտանգն էլ աւելի կ'աճի. իսկ երկրորդ, և այդ է գլխաւորը, մի երկրում, ուր արդէն երկաթուղիներ են բանում, և հեշտ հաղորդակցութեան միջոցներ կան հացաբեր երկիրների հետ,—հացը երբէք չի կարող շատ թանկանալ։ Ռուսաստանի բաղմաթիւ նահանգներում այժմ սով կայ,—բայց ոչ մեծ թանկութիւն. գիւղացիք փող չունին հաց գնելու, ահա սարսափելին, և ոչ թէ հացն է շատ թանկ։ Միլիոնաւոր գիւղացիք առանց միջոցի են ցորեն կամ հաճար գնելու թէկուզ ոչ թանկ գներով, որ ցանեն և մինչ նոր հունձերը կերակրուեն,—ահա թէ ինչումն է խնդիրը։

Ինչ է հարկաւոր անել այդպիսի դէպքում։ Աղէտը մեծ է, միջոցներն էլ պէտք է մեծ լինեն, անսովոր լինեն։ Երբ մի աղէտ այդքան լայնածաւալ է և արդէն պետական ընդհանուր շահերին է դիպչում—մասնաւոր բարերարութիւններն էլ չնչին նշանակութիւն կարող են ունենալ և ոչ իսկ հասարակաց շտեմարանները կարող են բաւել։ Այստեղ պէտք է տէրութիւնը ինքը միջամտի։ Հարկաւոր է 100 միլիոն պուդ հացահատիկ հասցնել կարօտեալ նահանգներին. ամենախելացին հէնց այն կը լինի որ տէրութիւնը դիցուք 100 միլիոն ռուբլու փոխառութիւն անի, այդ փողով կուրսային գների համաձայն 100 միլիոն պուդ ցորեն առնի թէ տէրութեան սահմաններում, ուր հունձը լաւ է եղել և կամ արտասահմանի հարևան երկիրներում, և այդ քանակութիւնը բաժանի կարօտեալ նահանգների մէջ. թէ ցանքի համար և թէ կերակրելու համար։ Եւ որտեղից լետ ստանալ պարտքը վճարելու համար՝ 100 միլիոն գումարը իւր տոկոսներով? Կարելի էր կարծել թէ այդ պարտքը պէտք է վճարեն միայն այն դժբաղդացած նահանգները, որոնք օգնութիւն են

սասրեալ։ Բայց ոչ. դա դուցէ չափազանց ծանր լինէր նոցա համար։ Աւելի լաւ է որ ամբողջ կայսերութիւնը մասնակցի այդ պարտքի վճարելուն. այն 100 միլիոն ռուբլին լետ կը վճարուի մասամբ վիճակախաղերի արդիւնքով, մասամբ ժողովարարութիւններով, իսկ մնացածը պետական նոր, բայց յատուկ այդ պարտքը վճարելու համար նշանակուած, հարկերով, որ կարող են տեւել մի քանի տարի։ Այսպիսով աղէտի դէմն առնելուն աջակցած կը լինի ամբողջ պետութիւնը, վտանգուած նահանգները ազատուած կը լինեն, և հարկ էլ չէր լինիլ նոյն իսկ հացահատիկների առ/տուրը խանգարել, և դորանով միլիոնաւոր ուրիշ հողագործների շահերին դիպչել, նոցա տնտեսական հաշիւները խառնել։ Մի այնպիսի երկրի համար, որպիսին Ռուսաստանն է, ուր գիւղացիները հաց են մշակում արտահանութեան համար, հացահատիկների գնիրը միանգամից իջեցնելը — մի ամենածայրահեղ միջոց է։ Նրեակալեցէք դրութիւնը այն միւս մի քանի տասնեակ միլիոն գիւղացիների, որոնք իրանց յոյսերը կապել էին հացի առատրի մի որոշ գրութեան հետ, և յանկարծ, մի անգամից այդ բոլոր գործին մի այլ ուղղութիւն է տրւում և գնները իջնում։ Որը աւելի լաւ է՝ դժբախտացած նահանգներից դուրս ուրիշ մի քանի տասնեակ նահանգներ իրարանցումի մէջ գցել և նոցա արդար շահերին վնասել, թէ այնպէս անել, որ գիւղացիների այդ ապրանքը սովորական գնով առնէն, միայն թէ դորանից առաջացած մի երկու տասնեակ միլիոն ռուբլու պարտքը վճարելուն մասնակցել տալ ընդհանրութիւնը։

Նոյն կերպ կարելի է վարուել, եթէ մեր երկրի հունձերին նման դժբաղդութիւն պատահի. այսպիսի դէպքում, եթէ աղէտը շատ ընդհանուր է, պետութիւնը ինքը պէտք է հաց դնել տալ (որ շատ հեշտ է), բաժանէ տեղացիների մէջ և մսխած դրամը լետ ստանալ ոչ միայն օգնութիւն ստացած ժողովրդից, այլ ընդհանրութիւնից։

Հայկական թատրոնը շարունակում է ընդհանրապէս բաւարար մուտք տալ. բայց արդէն պատահում է նաև կիսով չափ դատարկ աուդիտորիաներ։ Ուրիէլ-Ակոստան, որ երկուշաբթի օրն էր տրւած՝ անբաւարար մուտք տուեց. Բանդած Օջախը, որ տրւեց մի այնպիսի օր, երբ Թիֆլիսի այլ և այլ տեղերում հետաքրքրաշարժ ներկայացումներ կային (ռասց խմբի տ. Կազինալի բենեֆիսը, Աստոմատ օպերետի ներկայացումը, նոր ցիրկի բացումը), նմանապէս անբաւարար մուտք տուեց։ Մնացածները՝ Օրլաչ չարիք Պոտէխինի, Հրէուհի (հեղինակ?), Արչակ II Գալֆալեանի, Պարոն դը Պուրսոնեակ Մոլիէրի—բաւարար կամ լիքը մուտք տային։

Նորանոր ներկայացումները և պիեսները լրացնում են մեր դիտողութիւնները խմբի դերակատարների վերաբերեալ. տիկին Սիրանուշ արդէն փիշուած է. բայց նա, քանի գնում, այնքան աւելի ամրացնում է այս հա-

յեացքը, որ յանձին նորա մենք ունենք ոչ միայն մի ընդհանրապէս շնորհալի դերասանուհի, այլ և լուրջ ու տաղանդաւոր դերասանուհի. և եթէ նորա Թիֆլիս գալը՝ Թիֆլիսում մնալ դառնայ, և այս նոր քաղաքը, նոր հասարակութիւնը ե Պոլսի կեանքից ջոկ աշխարհը նորա համար նոր ուսումնասիրութեան և ինքնաքննադատութեան ճանապարհ բաց անէ—հաւանօրէն նա ապագայում նաև փայլուն անուն կը ստեղծի հայ թատրոնի պատմութեան մէջ։

Տիկին Սիրանուշից դուրս, խմբի մէջ սկսում է իւր վերայ աւելի ու աւելի ուշք դարձնել պ. Աբէլեանը, որը այնքան սխալ քայլով սկսեց իւր դերիւտը Կամելիազարդի մէջ։ Աւելի ես մեծ հաճոյքով ես ուզում եմ արձանագրել այստեղ նորա յաջողութիւնը։ Անցեալ քրոնիկում արդէն առիթ ունեցայ նկատել նորա խաղը Նեւեժինի «Երկրորդ երիտասարդութեան» մէջ, Եգոր Պարուսովի բեզոնեօրական դերում. այժմ դորա վերայ կ'աւելացնեմ նորա խաղը Օրայ չարիքի մէջ՝ Խլապոնին հօր դերում, Հրէուհու մէջ՝ հրէայ ոչկերիչ Սղիտարի դժուարին դերում, Արշակ II ի նման անշնորք պիեսի մէջ հայոց նախարար Դրաստամատի դերում։ Այդ (բայց միայն այդ) դերերում պ. Աբէլեանի խաղը յաջող էր, իսկ երբեմն նա կարողանում էր հասարակութեան ուշադրութիւը իւր հետ տանել։ Այդ արդէն լաւ նշաններ են մի երիտասարդ դերասանի համար։

Զարմանալի կերպով փոխուել է օր. Վարդուհին։ Այդ փոփոխութիւնը կատարւում է մեր աչքի առջև. այլ տարիներ գրեթէ միշտ դեր փչացնողից՝ ներկայ խմբում նա դառել է իւր դերերը յաջողութեամբ և պատուով տանող դերասանուհի։ Նա աննման էր Քանդած օջախում՝ Օսէփի հօրաքոյր պառաւ Խախօի դերում. հետաքրքրական էր (թէև ոչ ճշգրիտ տիպիքական) պառաւ Խլապոնինայի դերում Օրան չարիքի մէջ. մանաւանդ պառաւների դերերում որքանով որ այդ դերերը բեզոնիօրական են,—յաջողութիւն է գտնում։ Եթէ ներկայ խումբը ում և է իւր անդամներից իսկական ծառայութիւն է մատուցել—այդ՝ օր. Վարդուհուն է։

Պր. Թուրեան, լուրջ կոմիկ է, և, ինչպէս տեղեկացնում է պ. Վրոլրի նոր լոյս տեսած բրոշիւրը, երեսուն տարի է որ ծառայում է հայկական բեմին, մեծ մասամբ Տաճկաստանում։ Պր. Թուրեան վիսուն տարեկանը անցած դերասան է. նորա հումորը մասամբ կորցրած է թարմութիւնը. տարիքի ծանրութիւնը զգացնել է տալիս ձայնի և փչողութեան վերայ, բայց ծիծաղը սրտանց է, կոմիզմը դուրեկան ու բնական։ Ափսոսալ պէտք է, որ լուրջ կոմիկ լինելով՝ լուրջ չկոչա անցած չէ, ե նորա խաղը չի հիմնուած լուրջ ուսումնասիրութեան վերայ. շատ հեշտութեամբ հակւում է դէպի զաւեշտականը այնտեղ, ուր միայն լուրջ կոմիզմը պէտք է երևան գայ։

Այս անգամին թող այսքանը բաւական համարուի։ Անշուշտ դեռ առիթներ կ'ունենամ խմբի միւս դերակատարների մասին խօսելու և փիշուածների մասին նոր տողեր աւելցնելու։

Յետ գլուխեան։ Ամսիս 28-ին տուաց Նորուեգացի Իպսէնի «Անանկութիւն» դրամատ, որը և իսոյ տպատրութիւն թողուց հանդիսականների վերայ։ Մէջ ու մէջ տուած այդպիսի պիեսներ հալկական բեմի նշանակութիւնը միայն բարձրացնել կարող են, մանաւանդ այնքան բարեխիղճ դերակատարութեամբ, ինչպիսին խումբը ցոյց տուաց այդ երեկոյ։ Դա իսկապէս խմբական խաղ էր, որից աւելի լաջողը մենք չէինք ունեցած տա սեղոնում։

Լ. ՈՒՍԻՆԻ